

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
1—ԻՆ ԿԻՍԱՍՅԱՆ 2022 թ.

Բովանդակություն

- Ներածություն	3
- Զուտ շահույթ	4
- Ընդհանուր ակտիվներ	5
- Վարկային ներդրումներ	7
- Ընդհանուր պարտավորություններ	9
- Ավանդներ և պարտատոմսեր	10
- Ընդհանուր կապիտալ	12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2022 թ. 1-ին կիսամյակի Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են


- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **111 մլրդ ՀՀ դրամ**, ինչը **70 մլրդ ՀՀ դրամով** կամ **2.7** անգամ ավել է քան 2021 թվականի կիսամյակի ընթացքում գրանցած արդյունքը: Շահույթի նման աճը պայմանավորված է հիմնականում ոչ տոկոսային եկամուտների զգալի աճով:
- Նշված ժամանակահատվածում ամենամեծ շահույթը գրանցել է Արդշինբանկ-ը, այն կազմել է շուրջ **20 մլրդ ՀՀ դրամ**:


Բանկերի զուտ շահույթը 1-ին կիսամյակ 2022 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աճել են **193 մլրդ ՀՀ դրամով**, կամ **2.7%**:
- Առ 30.06.2022, ընդհանուր ակտիվները կազմել են **7.239 մլրդ ՀՀ դրամ**:


Բանկերի ընդհանուր ակտիվները - 30.06.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի (Արդշինբանկ, Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ) ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56.6%**:
- Ամենախոշոր **3** բանկերի (Արդշինբանկ, Ամերիաբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ) ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.7%**:
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **15.7%**:


Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 30.06.22



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում նվազել է **1.1%**-ով:
- Առ 30.06.2022 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **3.958 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **55%**:
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:


Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 1 կիսամյակ 2022 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.8%**:
- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **44.6%**:
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է **17.3%**:


Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 30.06.22



Ընդհանուր պարտավորությունները


- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում նվազել են **19 մլրդ ՀՀ դրամով**, կամ **0.3%**:
- Առ 30.06.2022, ընդհանուր պարտավորությունները կազմել են **6.100 մլրդ ՀՀ**:

Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 30.06.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ


- Բանկային համակարգի ընդհանուր ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աճել են **71 մլրդ ՀՀ դրամով**, կամ **1.8%**:
- Առ 30.06.2022, ընդհանուր ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **3.945 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **65%**:



Պարտատոմսեր


- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը նվազել է 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում **70 մլրդ ՀՀ դրամով**, կամ **16%-ով** և կազմում է **376 մլրդ ՀՀ դրամ**:
- Նշված էական նվազումը հիմնականում բացատրվում է Արդշինբանկ-ի պարտատոմսերի մնացորդի նվազմամբ - **48 մլրդ ՀՀ դրամ**:
- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **12-ը**:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 30.06.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ


2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **212 մլրդ ՀՀ դրամ-ով**, կամ **23%** ու կազմել **1.139 մլրդ ՀՀ դրամ**: Նշված աճը հիմնականում պայմանավորված է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ի կանոնադրական կապիտալի աճով, որը ավելացել է շուրջ **128 մլրդ ՀՀ դրամ-ով**: Բանկի նոր բաժնետերերն են ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ը (75% բաժնեմաս) և <<Բնակարան երիտասարդներին>> վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ը (25% բաժնեմաս):



Ընդհանուր կապիտալ

- Առ 30.06.2022թ. **Կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **61%-ը** և հավասար է **694 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.06.2022թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **38%-ը** և հավասար է **437 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.06.2022թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **1%-ը** և հավասար են **8 մլրդ ՀՀ դրամ**:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 30.06.2022



RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09

Էլ. փոստ՝ info@rumels.am

Կայք՝ www.rumels.am